— Այնպէս, համեցէք, վեր առէք, յարգելի բժշկապետ: Մեզանից ի՞նչ կը պակսի, եթէ ձեզ այդ բոլորը փէշքեշ անենք, եւ դուք մեր երկրից մի լաւ յիշատակ տանէք ձեզ հետ:

— Շնորհակալ եմ, ես էլ գիտեմ, որ ձեզ ոչինչ չի պակասի, երեւում է, որ դուք շատ հարուստ էք, բայց ես փէշքեշներ ընդունելու սովորութիւն չունեմ:

Ասիական վաճառականների սովորութիւնն է այդ, երբ մի բան գնելու լինես, նախ կասէ. «տար, փող մի տուր, թող քեզ ընծայ լինի»: Իսկ երբ փող առաջարկես, սարսափելի գներ կը պահանջեն: Նոյնպէս վարուեցան եւ մեր հայ վաճառականները:

— Չէ՞ք հաւատում, յարգելի բժշկապետ, — ասում էր մահտեսի Թորոսը, — եթէ չէք հաւատում, հարցրէք խնամի Մկոյից, նա իր աչքով տեսաւ, որ մի ընկլիս այդ ցուլի գլխին յիսուն կարմիր ոսկի տուեց, բայց ես չտուեցի: Այդպէս չէ՞, խնամի Մկոյ:

— Հոգիս վկայ, ճշմարիտ է ասում, — պատասխանեց խնամի Մկոն, ձեռքը տանելով դէպի կուրծքը եւ դնելով իր հոգու վրայ:

Բայց որքան պէտք էր հաւատալ խնամի Մկոյի հոգուն, որը այդպիսի երդումների մէջ այնքան շատ էր գործածել, որ բոլորովին մաշուել էր: Միայն ծիծաղելին այն էր, երբ Ասլանը վեր առեց մի քանի իրեղէններ, որոնք խնամի Մկոյին էին պատկանում, դա էլ իր կողմից վկայ կանչեց մահտեսի Թորոսին, որ նա իր աչքով տեսել էր եւ իր ականջով լսել էր, որ մի ֆրանկ ահագին գումարներ էր առաջարկել, բայց նա չէր ընդունել:

— Թող Երուսաղէմի սուրբ տաճարի մէջ իմ տեսած լոյսը աչքերս կուրացնէ, թող ես Քրիստոսի մեխ խփողներից մէկը լինեմ, եթէ սուտ լինեմ ասում, — պատասխանեց մահտեսի Թորոսը, — ֆրանկը ահագին գումարներ առաջարկեց, բայց նա չընդունեց:

— Ես մի հասարակ բժիշկ եմ, ես մեծ գումարներ չունեմ, — ասաց Ասլանը, իր ընտրած իրեղէնները նրանց հետ տալով:

— Ինչո՞ւ էք նեղանում, յարգելի բժշկապետ, — ձայն տուեցին երեք կողմից, — խնդրում ենք, եթէ կամենում էք, վեր առէք, ձեզանից ո՞վ է փող ուզում:

Ասլանը այս անգամ այլեւս չկարողացաւ զսպել իր անհամբերութիւնը եւ ասաց.

— Չգիտեմ ի՞նչ անել ձեզ հետ, երբ կամենում եմ մի բան վեր առնել, ահագին փողեր էք պահանջում, իսկ երբ ցած եմ դնում, առաջարկում էք ձրի ընդունել: